Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/60 »* ծածկագրով

էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/60-1

ք. Երևան ____/_____/2023թ.

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ »-ը ի դեմս Հովհաննես Մովսիսյան ի, որը գործում է « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « ՍԻԳՄԱ 14 ՍՊԸ »-ը, ի դեմս տնօրեն Նարեկ Մեհրաբյան ի, որը գործում է « ՍԻԳՄԱ 14 ՍՊԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և ^tender_code^ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։ Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը։ Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով։

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ընտել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով

ապրանքի բնույթից և նշանակությունից։

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը։

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները։

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը։

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները։

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը։

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով։

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում։

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք։

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր։

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը։

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը։

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը։

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին։

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 5724000.00 AMD(հինգ միլիոն յոթ հարյուր քսանչորս հազար դրամ) ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն։629[1]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը։

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը։

730[2]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի

30-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

-

4. **ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ____ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

8 31[3]

5. **ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի

պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:[9] 3[4]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ։

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով։

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց։

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

__ [5]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության։

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է։

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում։

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը։

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման։

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

11[6]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի

առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրի 5.1 կետում նշված հանձնման-ընդունման արձանագրության հաստատման օր է համարվում պատվիրատուի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու օրը: ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող կազմակերպությունների համար Ապրանքի մատակարարման օր է հանդիսանում ներմուծվող ապրանքների ՀՀ մաքսային տարածքը հատելու օրը, որը սահմանվում է ապրանքները մաքսազերծելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում հաստատված հանձնման-ընդունման արձանագրությամբ:

13[8]

10. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ	**ՍԻԳՄԱ 14 ՍՊԸ**
ք.Երևան, Նորք, Գ. Հովսեփյան փ.26	**ք.Երևան Դավիթ Անհաղթ 6,700**
Ինեկոբանկ ՓԲԸ	**Հայէկոնոմբանկ ԲԲԸ**
2050022082671001	**163218054472**
01540062	**01046178**
----------	**----------**
/ստորագրություն/	**/ստորագրություն/**
Digitally signed by MOVSISYAN HOVHANNES 2714920608 Date: 2023.01.30 14:47:19 AMT	Digitally signed by MEHRABYAN NAREK 2904780459 Date: 2023.01.30 12:16:13 AMT
Կ.Տ	**Կ.Տ**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

[1]29 6 *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2]30 7 *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[3]31 8 *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[4]*9 Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[5]10 *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[6]11 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7]12 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[8]13 *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
____/_____/2023թ. կնքված
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/60 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, մակնիշ, ֆիրմայի անվանում*	տեխնիկական բնութագիրը
1	32321210/93	Վիդեո պրոցեսոր LED տեսապատի համար	Novasta, Novasta, Novastar H9, Novasta	Վիդեո պրոցեսոր LED տեսապատի համար Սա տեսապատերի միացման սարք է նախագծված հատուկ պիքսելների փոքր քայլքով LED էկրանների համար: Այն կարող է աշխատել որպես միակցող պրոցեսոր, որը ինտեգրում է վիդեոյի մշակման և կառավարման հնարավորությունները կամ ուղղակի միակցման պրոցեսոր: Սարքավորումն ունի միացվող մոդուլային կոնստրուկցիա, ապահովում է ճկուն համալարում և հրատապ փոխարինում մուտքային և ելքային մոդուլների: Հիմնվելով FPGA համակարգի հզոր ապարատային ճարտարապետության վրա,

				այն հագեցված է կայուն և բարձր արդյունավետության ապարատային համակարգով, որն ապահովում է սպասարկման պարզություն և խափանումների ցածր հաճախություն: Պրոցեսորն հագեցված է ստանդարտ մուտքային հարակցիչներով, ներառյալ HDMI, DVI, DP, VGA, CVBS, SDI և IP, որոնք ապահովում են ներանցումը և մշակումը 10-բիթանոց վիդեո աղբյուրի, ինչպես նաև 4K բարձր հստակության մուտքերի և ելքերի: Սարքը նաև տրամադրում է երկու տեսակի LED 4K փոխանցման քարտեր թույլ տալով իրականացնել պահուստային պատճենում OPT և Ethernet մատույցների միջև, , ինչպես նաև փոխանցում գերհեռավոր տարածությունների վրա: Սարքն ապահովում է բազմէկրան և բազում մակարդակներով կառավարում, EDID-ի ներանցման և արտանցման կառավարում և մոնիտորինգ, ներանցման աղբյուրի վերանվանում, էկրանային աշխատացանկի համալարում և այլ բաներ՝ պատկերների կառուցման հարուստ հնարավորություն ընձեռելով: Շնորհիվ բրաուզեր/սերվեր կառավարելու հնարավորության ապահովվում է միջպլատֆորմային, միջհամակարգային հասանելիություն և կառավարում Windows-ից, Mac-ից, iOS-ից, Android-ից և Linux-ից: Աջակցում է մի քանի օգտատերերի առցանց համագործակցությանը: Առանձնահատկություններ • Մոդուլային և համակցվող դիզայն, ըստ ցանկության ազատ համադրում, երկու տեսակի 4K առաքման LED քարտեր • Մի քանի տարողություններով կոնֆիգուրացիա քարտերի մեկ սլոթում - առնվազն 4x 2K×1K 60 Հg-ի դեպքում - առնվազն 2x 4K×1K 60 Հg-ի դեպքում - առնվազն 1x 4K×2K 60 Հg-ի դեպքում • Էկրանի պարզ համալարում՝ մեկ քարտի և հարակցիչի օգտագործմամբ • Բոլոր մուտքային և ելքային քարտերի կարգավիճակի առցանց մոնիտորինգ • Հրատապ փոխարինման հնարավորությամբ

				ներանցման և արտանցման քարտեր • 2 x RJ45 մուտքի IP քարտը ապահովում է մինչև 100 IP խցիկի մուտքերը և մուտքերի խճանկարը: • Ապահովում է HDCP կոդավորված աղբյուրների ավտոմատ վերծանումը • HDR10 և HLG մշակում • Յուրաքանչյուր էկրան կարող է ունենալ իր սեփական ելքային լուծաչափը: • Ելքերի խճանկար • Օգտագործում է կադրերի սինխրոնիզացման տեխնոլոգիա, որն երաշխավորում է, որ բոլոր ելքային հարակցիչները պատկերը արտածում են սինխրոն, իսկ պատկերն ամբողջական է և վերարտադրվում է սահուն առանց արգելափակման, կադրի կորուստի, ընդհատումների կամ բացերի: Էկրանի ոչ ստանդարտ կազմաձևում • Աջակցում է ոչ ստանդարտ ուղղանկյունաձև խճանկարին ` առանց որևէ սահմանափակումների: • Մուտքային աղբյուրների խմբավորման կառավարում • LCD շրջանակի կոմպեսացում Ցուցադրման բազմազան ընտրանքներ ճկուն համալարման համար • Բազմաշերտ դիսփլեյ Մեկ քարտն ապահովում է առնվազն 16 x 2K շերտ, 8 x DL շերտ կամ 4 x 4K շերտ: Բոլոր շերտերն ապահովում են արտանցումը խաչաձև միակցիչով, իսկ շերտերի քանակությունը չի նվազում խաչաձև միակցիչով արտանցման համար: • Բարձր հստակությամբ «վազող տող» «Վազող տող» - ի տեքստի բովանդակության կարգավորման հնարավորություն, օրինակ կարգախոսների կամ ծանուցումների, ինչպես նաև տեքստի ոճի, պտտման ուղղության և արագության սահմանման հնարավորություն: • Մինչև 2000 նախակայանքներ Ապահովվում է մարման էֆեկտ և սահուն փոխարկում, նախապես սահմանված փոխարկման տևողությունը 60 մվրկ-ից պակաս • Վերարտադրման պլանավորման հնարավորություն ըստ վերարտադրման համար կանխորոշված ցանկի Վերարտադրման ցանկում մոնիտորինգի, շնորհանդեսների և այլ հավելվածներին

				համապատասխանող տեղակայման, նախապայմանների ավելացման հնարավորություն • OSD կարգավորումներ մեկ էկրանին և կարգավորելի OSD թափանցիկություն • Կապուղու տարբերանշանի կառավարում •Մուտքային աղբյուրը նույնականացման համար տեքստային կամ գրաֆիկական տարբերանշանի տեղակայման հնարավորություն: • Մուտքային աղբյուրի ընդհատում և ընդհատումից հետո վերանվանման հնարավորություն: Ցանկացած մուտքային պատկերի ընդհատման հնարավորություն և ընդհատումից հետո նոր մուտքային աղբյուրի ձևավորում: • HDR և 10-բիթանոց տեսամշակում հնարավորություն է ընձեռող ավելի որակյալ և հստակ պատկերների ստացման • Գույնի համալարում Ելքային ազդանշանի գույնի կարգավորման հնարավորություն՝ ներառյալ պայծառությունը, ցայտունությունը, հագեցվածությունը, երանգը և գամման • XR սցենարի կառավարում • 3D գործառույթ • Ցածր հապաղում Մուտքային աղբյուրի ազդանշանի մինչ ընդունող քարտ հապաղման նվազեցում մինչև առնվազն 1 կադր: Կառավարում վեբ էջի միջոցով • Վեբ հսկողություն • Արձագանք իրական ժամանակում և 1000M / 100M ինքնակարգավորվող ցանցի կառավարում, որը հնարավորություն է տալիս բազմաթիվ օգտատերերի համագործակցելու • Վեբ էջի միջոցով մուտքեր ու ելքերի վերահսկման հնարավորություն • Վեբ էջի միջոցով ծրագրային ապահովման թարմացման հնարավորություն Կարգավիճակի վերահսկում և պահուստային սնուցման աղբյուր' կայունության ու հուսալիության բարելավման նպատակով • Ինքնախույզ՝ անսարքությունների հայտնաբերման համար • Ավտոմատ մոնիտորինգ և վթարային ազդանշաններ Ապարատային մոնիտորինգի ապահովում՝ օդափոխիչի արագության, մոդուլի ջերմաստիճանի և լարման,

				աշխատանքային կարգավիճակի և անհրաժեշտության դեպքում ուղարկում է անսարքության մասին տագնապի ազդանշաններ: • Լրացուցիչ սնուցման աղբյուրի աջակցություն ' համակարգի հուսալիությունը բարելավման համար: • Պահուստավորման դիզայն - Պահուստավորում սարքերի միջև - Պահուստավորում LED 4K առաքման քարտերի միջև Տեխնիկական բնաութագծեր: • Մուտքային ինտերֆեյսներով քարտերի քանակը' առնվազն 15 • Մուտքային կապուղիների քանակը՝ առնվազն 60 • Ելքային քարտերի քանակը (առաքման քարտեր)՝ առնվազն 10 • Ելքային քարտերի քանակը (LED 4K առաքման քարտեր)՝ առնվազն 5 • Բեռնման հզորությունը՝ առնվազն 65,000,000 պիքսել • Շերտերի քանակը (տեսաելքերով քարտեր)՝ առնվազն 160 • Շերտերի քանակը (LED 4K առաքման քարտեր)՝ առնվազն 80 • Էլեկտրական բնութագծերը՝ ~ 100–240Վ, 50/60Հց, 10a-5Ա Կառավարման քարտ GENLOCK Երկմակարդակի և եռամակարդակի աջակցություն: • Մուտք՝ Genlock ազդանշանի ապահովում • LOOP: Genlock ազդանշանի շրջադարձ ETHERNET մատույց Gigabit Ethernet մատույց • Միացման համար կառավարման համակարգչի հետ: • Երթուղղիչին, կոմուտատորին կամ համակարգչին միացնելու համար: • Վեբ կառավարման և էկրանի համալարման համար USB 1 և USB 2 մատույցներ 2 x USB 2.0 մատույց • Սարքի Ծրագրային թարմացում: • Սարքի կազմաձևման պարամետրերի ներմուծում կամ արտահանում: COM մատույց Հաջորդական մատույց, որն օգտագործում է RS232 հաջորդական արձանագրություն Կենտրոնական համակարգի կառավարման ապահովում • Մուտք՝ Ազդանշան կենտրոնական կառավարման համակարգից ընդունելու հնարավորություն • Ելք՝ մուտքային ազդանշանի շրջադարձ 12G-SDI մուտքերով քարտեր - Հետադարձ

				համատեղելիություն 6G-SDI, 3G-SDI, HD-SDI և SD-SDI-ի հետ - ST-2082-1 (12G), ST-2081-1 (6G), ST-424 (3G), ST-292 (HD) և SMPTE 259 SDI-ի ապահովում: - Յուրաքանչյուր հարակցիչ ապահովում է լուծաչափ առնվազն 4096 × 2160 60 Հց-ի պայմաններում: - ապահովում է 1080i / 576i/480i տարածման de-interlacing մշակում - 12G-SDI ազդանշանի հանգուցակապով ելք (Loop out). Առնվազն 1 x HDMI2. 0 և 1 x DP1. 2 մուտքերով քարտեր Վեբ էջի օգնությամբ միացման տեսակի ընտրություն: Լռելյայն-HDMI 2.0 միակցիչ: HDMI 2.0 - HDMI 1.4-ի և HDMI 1.3-ի հետ հետադարձ համատեղելիություն - Ապահովվող լուծաչափը ոչ պակաս, քան 3840 × 2160 60 Հց - HDCP 2.2 Համատեղելիություն - Օգտատերերի լուծաչափեր՝ Լայնությունը՝ առնվազն 4092 պիքսել (4092×2261 60 Հց-ի դեպքում) Բարձրությունը՝ առնվազն 4095 պիքսել (2188×4095 60 Հց-ի դեպքում) 8 -bit (RGB 4:4:4, YCbCr 4:4:4, YCbCr 4:2:2)-ի դեպքում լուծաչափը ոչ պակաս, քան 4092×2160 60 Հց-ի պայմաններում, 8192×1080 60 Հց-ի պայմաններում 8-bit (YCbCr 4:2:0) դեպքում լուծաչափը ոչ պակաս, քան 4092×2160 60 Հց-ի պայմաններում 10-bit (RGB 4:4:4, YCbCr 4: 4:4) դեպքում լուծաչափը ոչ պակաս, քան 4092×2160 30 Հց-ի պայմաններում, 4092×1080 60 Հց-ի պայմաններում 10-bit (YCbCr 4:2:2, YCbCr 4:2:0) դեպքում լուծաչափը ոչ պակաս, քան 4092×2160 60 Հց-ի պայմաններում 12-bit (RGB 4:4:4, YCbCr 4:4:4) դեպքում լուծաչափը ոչ պակաս, քան 4092×2160 30 Հց-ի պայմաններում, 4092×1080 Հց-ի պայմաններում 12-bit (YCbCr 4:2:2, YCbCr 4:2:0) դեպքում լուծաչափը ոչ պակաս, քան 4092×2160 60 Հց-ի պայմաններում DP 1.2 – Հետադարձ համատեղելիություն DP 1.1-ի հետ - Առնվազն 4096 × 2160 60 Հց հաճախականությամբ կամ 8192 × 1080 60 Հց հաճախականությամբ լուծաչափերի ապահովում: -

				HDCP 2.2-ին համատեղելիություն - Օգտատերերի լուծաչափեր՝ Լայնություն՝ առնվազն 8192 պիքսել (8192×1146 60 Հց-ի դեպքում) Բարձրությունը՝ առնվազն 4095 պիքսել (2188×4095 60 Հց-ի դեպքում) 8-bit (RGB 4:4:4, YCbCr 4:4:4, YCbCr 4:2:2) դեպքում լուծաչափը՝ առնվազն 4092×2160 60 Հց-ի պայմաններում, 8192×1080 60 Հց-ի պայմաններում 10-bit (RGB 4:4:4, YCbCr 4:4:4) դեպքում լուծաչափը՝ առնվազն 4092×2160 30 Հց-ի պայմաններում, 4092×1080 Հց-ի պայմաններում: 10-bit (YCbCr 4:2:2) դեպքում լուծաչափը՝ առնվազն 4092×2160 60 Հց-ի պայմաններում 12-bit (RGB 4:4:4, YCbCr 4:4:4) դեպքում լուծաչափը՝ առնվազն 4092×2160 30 Հց-ի պայմաններում, 4092×1080 60 Հց-ի պայմաններում 12-bit (YCbCr 4:2:2) դեպքում լուծաչափը՝ առնվազն 4092×2160 Հց-ի պայմաններում Ելքերի քարտեր Նախադիտման քարտ' առնվազն 2 x RJ45 և 1 x HDMI1. 3 ելքերով • Ելքի համար օգտագործվում են առնվազն երկու RJ45 Gigabit Ethernet մատույց և մեկ HDMI1.3 ելք • Ցանցին միացում մուտքերի և ելքերի մոնիտորինգի համար՝ օգտագործելով առնվազն երկու RJ45 Gigabit Ethernet մատույց: • Մոնիտորին միացումը՝ մոնիտորինգի տեղեկատվության ցուցադրման համար՝ առնվազն 1 x HDMI1.3 ելք-ի օգնությամբ Առնվազն 16 x RJ45 և առնվազն 2 x օպտոթելքային ելքերով առաքման քարտ 4K LED առաքման քարտը կարելի է բեռնել մինչև առնվազն 10,400,000 պիքսել (լայնությունը՝ առնվազն 10,240 պիքսել, բարձրությունը՝ առնվազն 10,240 պիքսել): Այս քարտը զբաղեցնում է երկու սլոթ: •Միչև առնվազն 16 x ելքեր RJ45 Gigabit Ethernet - Կարգայնությունը՝ 8 բիթ Մեկ Ethernet պորտը բեռնում է մինչև առնվազն 650,000 պիքսել: - Կարգայնությունը ՝ 10 բիթ Մեկ Ethernet մատույցը բեռնում է մինչև առնվազն 320,000 պիքսել: - Պահուստավորում Ethernet մատույցների միջև • Միչև առնվազն

				2 OPT ելք - Ինչպես SMF, այնպես էլ MMF փոխանցման ապահովում: – OPT 1-ը պատճենում և տվյալները փոխանցում է Ethernet 1-8 մատույցներին: – OPT 2-ը պատճենում և տվյալների փոխանցում է Ethernet 9-16 մատույցներին: Լրակազմում՝ • Կառավարման քարտ x 1 • Լրացուցիչ սնուցման աղբյուր x 1 • Քարտեր առնվազն 2 x 12G SDI մուտքերի համար • Քարտեր առնվազն 3 x HDMI2.0 և 3 x DP1.2 մուտքերի համար • Նախադիտման քարտ առնվազն 2 x RJ45 և 1 x HDMI1.3 ելքերով - 1 հատ • Առնվազն 16 x RJ45 և 2 x օպտոթելքային ելքերով առաքման քարտ - 2 հատ • CAT-5 մալուխ, HDMI-HDMI մալուխ, հոսանքի մալուխ 2 հատ Video Processors Novastar H9 Կցված է 41735933.docx
2	32321210/94	Մուլտիմեդիոն խաղարկիչ LED տեսապատի համար	Novasta, Novasta, Multimedia Player Novastar Taurus Series TB60, Novasta	Մուլտիմեդիոն խաղարկիչ LED տեսապատի համար Գունավոր LED էկրանների համար նախատեսված մուլտիմեդիոն խաղարկիչ: Այս մուլտիմեդիոն խաղարկիչը միավորում է տեսաազդանշանի վերարտադրման և փոխանցման հնարավորությունները՝ թույլ տալով հրապարակելու, կոնտենտը, համակարգչի, բջջային հեռախոսի կամ պլանշետի օգնությամբ կառավարելու էկրանները: Ամպային հրապարակման և մոնիտորինգի պլատֆորմների հետ աշխատելու հնարավորություն սարքը ընձեռում է ցանկացած վայրում և ցանկացած ժամանակ կառավարելի LED էկրանները ինտերնետին միացնող սարքի միջոցով: Ապահովվում է բազմէկրան սինխրոն վերարտադրությունը և սինխրոն և ոչ սինխրոն ռեժիմների: Ելքեր՝ • Բեռնվածության ծավալը առնվազն 2,300,000 պիքսել • Լայնությունը՝ առնվազն 4096 պիքսել • Բարձրությունը՝ առնվազն 4096 պիքսել • Առնվազն 4 Gigabit Ethernet մատույց • Առնվազն 1 x ստերեո աուդիո հարակցիչ • Ձայնի ներքին աղբյուրի դիսկրետիզացիոն հաճախականությունը

				սահմանվում է 48 կՀց: • Արտաքին աղբյուրից ձայնի դիսկրետիզացիայի հաճախականությունը ապահովվում է 32 կՀց, 44,1 կՀց կամ 48 կՀց • Առնվազն 1 x HDMI 1.4. առնվազն 1080p@60Hz Մուտքեր՝ • Առնվազն 1 x HDMI 1.4 • Պայծառության կամ ջերմաստիճանի և խոնավության տվիչի համար առնվազն 2 հարակցիչ Վերահսկում՝ • Առնվազն 1 x USB 3.0 (Type A) • Առնվազն 1 x USB (Type B) • Առնվազն 1 x Gigabit Ethernet մատույց Արտադրողականություն՝ • Քառամիջուկ ARM A55 պրոցեսոր առնվազն 1,8 ԳՀց հաճախականությամբ կամ համարժեք • H.264/H.265 4K, 60 Հց վիդեոյի դեկոդավորման ապահովում • Առնվազն 1 ԳԲ օպերատիվ հիշողություն • Առնվազն 16 ԳԲ ներկառուցված հիշողություն • 2 x 4K, 6 x 1080p, 10 x 720p կամ 20 x 360p տեսանյութի վերարտադրման հնարավորություն Առանձնահատկություններ՝ • Փոխարկում Wi-Fi AP-ի և Wi-Fi STA-ի միջև • Սինխրոն և ասինխրոն ռեժիմներ • Սինխրոն վերատադրություն մի քանի էկրաններին: • Ըստ ժամանակի սինխրոնացում NTP – ի միջոցով • Ըստ ժամանակի սինխրոնացում GPS – ի միջոցով • Ժամանակային սինխրոնացում (նշված ՌԴ մոդուլը պետք է տեղադրվի:) • Աջակցություն 4G մոդուլներին • Ցանցային միացմանի առաջնահերթություն. Լարային ցանց > Wi-Fi ցանց > 4G ցանց - Մի քանի տիպի ցանցերի հասանելիության պայմաններում, սարքը ավտոմատ կընտրի ազդանշան ի համապատասխան առաջնահերթության Բնութագծեր՝ • Մուտքային սնուցում՝ ~100-240V, 50/60Hz, 0.6A • Առավելագույն էներգիայի սպառումը 18 Վտ • RAM հիշողության ծավալը առնվազն՝ 1 ԳԲ • Ներքին հիշողություն առնվազն՝ 16 ԳԲ • Առնվազն 1x Wi-Fi շրջանային ուղղվածությամբ ալիքատար • 1 x սնուցման լար փոփոխական հոսանքի • IP վարկանիշ IP20 Համակարգային ծրագրային ապահովում • Օպերացիոն

				համակարգի ծրագրակազմ Android 11.0 • Android տերմինալային կիրառական ծրագրակազմ • FPGA ծրագիր Մեդիա դեկոդավորման հատկորոշիչներ Պատկեր՝ JPEG՝ JFIF 1.02 ֆայլի ձևաչափ, ապահովվող պատկերի չափսերը առնվազն՝ 96×32 պիքսելից միջև 817×8176 պիքսել, JPG, JPEG, SRGB JPEG ապահովում, Adobe RGB JPEG ապահովումն Ապահովում է՝ BMP, GIF, PNG, WEBP Վիդեո՝ MPEG-1/2 Ապահովվող ձևաչափեր և լուծաչափեր առնվազն՝ 48×48 պիքսելից մինչ 1920×1088 պիքսել, 30 կադր/վրկ 80 Մբ/վրկ DAT, MPG, VOB, TS MPEG-4 Ապահովվող ձևաչափեր և լուծաչափեր առնվազն ՝ 48×48 պիքսելից մինչ 1920×1088 պիքսել, 30 կադր/վրկ 38,4 Մբ/վրկ AVI, MKV, MP4, MOV, 3GP, MS MPEG4, v1/v2/v3, GMC H.264/AVC H.264 Ապահովվող ձևաչափեր և լուծաչափեր առնվազն `48×48 պիքսելից մինչ 4096×2304 պիքսել, 2304p@60 կադր/վրկ 80 Մբ/վրկ AVI, MKV, MP4, MOV, 3GP, TS, FLV, MBAFF MVC H.264 MVC Ապահովվող ձևաչափեր և լուծաչափեր առնվազն ՝ 48×48 պիքսելից մինչ 4096×2304 պիքսել, 2304p@60 կադր/վրկ 100 Մբ/վրկ MKV, TS H.265/HEVC Ապահովվող ձևաչափեր և լուծաչափեր առնվազն՝ 64×64 պիքսելից մինչ 4096×2304 պիքսել, 2304p@60 կադր/վրկ 100 Մբ/վրկ MKV, MP4, MOV, TS GOOGLE VP8 Ապահովվող ձևաչափեր և լուծաչափեր առնվազն՝ 48×48 պիքսելից մինչ 1920×1088 պիքսել, 30 կադր/վրկ 38.4 Մբ/վրկ WEBM, MKV GOOGLE VP9 Ապահովվող ձևաչափեր և լուծաչափեր առնվազն՝ 64×64 պիքսելից մինչ 4096×2304 պիքսել, 60 կադր/վրկ 80 Մբ/վրկ WEBM, MKV H.263 Ապահովվող ձևաչափեր և լուծաչափեր առնվազն՝ SQCIF (128×96), QCIF (176×144), CIF (352×288), 4CIF (704×576), 30 կադր/վ 38.4 Մբ/վրկ 3GP, MOV, MP4, H.263+ VC-1 Ապահովվող ձևաչափեր և լուծաչափեր առնվազն՝ 48×48 պիքսելից մինչ 1920×1088 պիքսել, 30

				կադր/վրկ 45 Մբ/վրկ WMV, ASF, TS, MKV, AVI MOTION JPEG Ապահովվող ձևաչափեր և լուծաչափեր առնվազն՝ 48×48 պիքսելից մինչ 1920×1088 պիքսել, 60 կադր/վրկ, 60 Մբ/վրկ, AVI /Multimedia Player Novastar Taurus Series TB60 Կցված է 81caf961.docx

* Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

ԳՆՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Հասցե՝ ք.Երևան, Նորք, Գ. Հովսեփյան փ.26

Ինեկոբանկ ՓԲԸ

2050022082671001

01540062

Հովհաննես Մովսիսյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by MOVSISYAN HOVHANNES 2714920608
Date: 2023.01.30 14:47:39 AMT

ՎԱՃԱՌՈՂ

ՍԻԳՄԱ 14 ՍՊԸ

Հասցե՝ ք.Երևան Դավիթ Անհաղթ 6,700

Հայէկոնոմբանկ ԲԲԸ

163218054472

01046178

Նարեկ Մեհրաբյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by MEHRABYAN NAREK 2904780459
Date: 2023.01.30 12:16:43 AMT

Հավելված N 2
____/_____/2023թ. կնքված
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/60 ծածկագրով պայմանագրի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	հատ	5400000.00	5400000.00	1	ՀՀ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	1	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երեք ամսվա ընթացքում /եթե մատակա ռարը չի համաձայն վում մատակարարել ավելի շուտ
2	հատ	324000.00	324000.00	1	ՀՀ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	1	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երեք ամսվա ընթացքում /եթե

							մատակա ռարը չի համաձայն վում մատակարարել ավելի շուտ

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Հասցե՝ ք.Երևան, Նորք, Գ. Հովսեփյան փ.26

Ինեկոբանկ ՓԲԸ

2050022082671001

01540062

Հովհաննես Մովսիսյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by MOVSISYAN HOVHANNES 2714920608
Date: 2023.01.30 14:47:59 AMT

ՎԱՃԱՌՈՂ

ՍԻԳՄԱ 14 ՍՊԸ

Հասցե՝ ք.Երևան Դավիթ Անհաղթ 6,700

Հայէկոնոմբանկ ԲԲԸ

163218054472

01046178

Նարեկ Մեհրաբյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by MEHRABYAN NAREK 2904780459
Date: 2023.01.30 12:17:05 AMT

Հավելված N 3
____/_____/2023թ. կնքված
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/60 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
1	32321210/93	Վիդեո պրոցեսոր LED տեսապատի համար	5400000.00	5400000.00	5400000.00	5400000.00	5400000.00	5400000.00	5400000.00	5400000.00	5400000.00	5400000.00	5400000.00	5400000.00	5400000.00
2	32321210/94	Մուլտիմեդիոն խաղարկիչ LED տեսապատի	324000.00	324000.00	324000.00	324000.00	324000.00	324000.00	324000.00	324000.00	324000.00	324000.00	324000.00	324000.00	324000.00

		համար													

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Հասցե՝ ք.Երևան, Նորք, Գ. Հովսեփյան փ.26

Ինեկոբանկ ՓԲԸ

2050022082671001

01540062

Հովհաննես Մովսիսյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by MOVSISYAN HOVHANNES 2714920608
Date: 2023.01.30 14:48:12 AMT

ՎԱՃԱՌՈՂ

ՍԻԳՄԱ 14 ՍՊԸ

Հասցե՝ ք.Երևան Դավիթ Անհաղթ 6,700

Հայէկոնոմբանկ ԲԲԸ

163218054472

01046178

Նարեկ Մեհրաբյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by MEHRABYAN NAREK 2904780459
Date: 2023.01.30 12:17:25 AMT

Հավելված N 4
____/_____/2023թ. կնքված
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/60 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20__թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/60-1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	Վիդեո պրոցեսոր LED							

	տեսապատի համար							
2	Մուլտիմեդիոն խաղարկիչ LED տեսապատի համար							

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված N 4.1
____/_____/2023թ. կնքված
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/60 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ -ի (այսուհետ՝ Գնորդ) և ՍԻԳՄԱ 14 ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող)
միջև 20 թ._____ -ին կնքված N ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/60-1 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
Վիդեո պրոցեսոր LED տեսապատի համար	հատ	
Մուլտիմեդիոն խաղարկիչ LED տեսապատի համար	հատ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն